

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱԵՄ:  
Խ. ԱՐՈՎՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ  
ՄԱՆԿԱԿԱՐԺԱԿԱՆ ՀԱՍՑԵՍԱՐԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ  
ՊՐՈՖԵՍՈՐ ՍՐՐՈՒՇԻ ԳԵՎՈՐԳՅԱՆԸ



ԿԱՐՄԻՔ

**Շահեն Շանթի Հարությունյանի «Քաղաքական այլախոհությունը  
Խորհրդային Հայաստանում 1960-1980-ական թթ. կեսերին» է. 00.01 «Հայոց  
պատմություն» մասնագիտությամբ պատմական գիտությունների թեկնածուի  
գիտական աստիճանի հայցման ատենախոսության վերաբերյալ**

2025 թ. հունիսի 13-ին տեղի ունեցավ Խ. Արովյանի անվան ՀՊՄՀ հայոց  
պատմության ամբիոնի նիստը, որին մասնակցում էին ամբիոնի վարիչի  
պաշտոնակատար, պատմ. գիտ. թեկնածու, պրոֆեսոր Է. Գևորգյանը, պատմ. գիտ.  
դոկտոր, պրոֆեսորներ Վ. Վիրաբյանը, Խ. Ստեփանյանը, պատմ. գիտ. թեկնածու,  
պրոֆեսոր Ա. Հարությունյանը, պատմ. գիտ. թեկնածուներ, դոցենտներ Է.  
Հովհաննիսյանը, Է. Մելքոնյանը, Ա. Եփրիկյանը, Ս. Խաչատրյանը:

Քննարկվեց Շահեն Շանթի «Քաղաքական այլախոհությունը Խորհրդային  
Հայաստանում 1960-1980-ական թթ. կեսերին» թեկնածուական ատենախոսությունը՝  
պատմական գիտությունների թեկնածուի գիտական աստիճան հայցելու համար:

Ելույթ ունեցան ատենախոսության գրախոսներ, պատմ. գիտ. դոկտոր,  
պրոֆեսոր Վ. Վիրաբյանը, պատմ. գիտ. թեկնածու, պրոֆեսոր Է. Գևորգյանը, ովքեր  
հրապարակեցին իրենց գրավոր կարծիքները: Տեսակետներ արտահայտեցին պատմ.  
գիտ. դոկտոր, պրոֆեսոր Խ. Ստեփանյանը, պատմ. գիտ. թեկնածու, պրոֆեսոր Ա.  
Հարությունյանը, պատմ. գիտ. թեկնածուներ, դոցենտներ Է. Միսնոնյանը,  
Է. Հովհաննիսյանը:

Քննարկման արդյունքներն ամփոփեց ամբիոնի վարիչի պաշտոնակատար, պատմ. գիտ. թեկնածու, պրոֆեսոր Է. Գևորգյանը:

ԽՍՀՄ փլուզումից հետո հնարավորություն ստեղծվեց անդրադառնալ դեռևս 1960-ական թթ. ձևավորված այլախոհական շարժման գիտական ուսումնասիրությանը. այդ շարժումն իր վերելքներով ու վայրէջքներով որոշակի դերակատարություն է ունեցել Խորհրդային պետության քաղաքական զարգացումներում: Ավելին, այդ պայմաններում այլախոհությանն անդամագրվելն արդեն իսկ պահանջում էր որոշակի մարդկային որակներ, ինչն անտարակույս պետք է գնահատել և արժևորել: Այլախոհները համարձակվել են պայքարել ամբողջատիրության դեմ, իսկ Հայաստանում նրանք բարձրացրել են անկախ պետականության ստեղծման հարցը, ինչը նոր որակ էր հանրապետության հասարակական-քաղաքական կյանքում:

Հետևաբար հիմնահարցի պատմագիտական ուսումնասիրությունն անչափ կարևոր է այդ տարիների քաղաքական կյանքի ամբողջական պատկերացումն ունենալու դիտակետից, առավել ևս, որ այդ շարժման առանձին ներկայացուցիչներ դարձել են ԽՍՀՄ-ի գոյության վերջին շրջանի և անկախ հանրապետությունների ձևավորման ժամանակաշրջանի քաղաքական իրադարձությունների ակտիվ մասնակիցներ:

Շահեն Հարությունյանի «Քաղաքական այլախոհությունը Խորհրդային Հայաստանում 1960-1980-ական թթ. կեսերին» թեկնածուական ատենախոսությունը համեստ փորձ է ամբողջացնելու հիմնահարցի գիտական լուսաբանումը, հիմնավորելու քաղաքական այլախոհության՝ համամիութենական մտային ընթացքի շեշտված ազգային առանձնահատկությունները, ընդգծելու նրա ոչ միայն պատմագիտական, տեսական քաղաքագիտական, այլև արդիական ու գործնական նշանակությունը:

Գիտական շրջանառության մեջ դնելով հայ և օտար հեղինակների պատմագիտական, հրապարակախոսական գրականության, արխիվային, մամուլի բազմաթիվ նյութեր, հայտնի այլախոհների հուշագրություններ, հարցազրույցներ, անձնական արխիվներ, այլախոհական ընդհատակյա տպագիր պուրբերականներ՝ ատենախոսը գիտական բարեխղճությամբ քայլ առ քայլ բացահայտել է հիմնահարցի առավել կարևոր կողմերը: Ներածությունից, չորս գլուխներից, եզրակացություններից, հավելվածից, օգտագործված աղբյուրների և գրականության ցանկից բաղկացած

աշխատանքում հեղինակը հանգամանորեն հիմնավորել է ատենախոսության թեմայի արդիականությունը, հետազոտության նպատակն ու խնդիրները, աշխատանքի գիտական նորույթը, ժամանակագրական շրջանակները և հարցի ուսումնասիրության աստիճանը: Ատենախոսին հաջողվել է համակարգել հայկական այլախոհության երեք հիմնական գաղափարական ուղղությունները, լուսաբանել Խորհրդային Հայաստանում հիմնադրված ընդհատակյա կազմակերպությունների գործունեությունը, նրանց գաղափարական առաջնահերթությունները, ինչպես նաև ուսումնասիրել և հանրայնացնել քաղաքական այլախոհության անհատական դրսևորումները:

Աշխատանքում հանգամանորեն բացահայտվել են քաղաքական այլախոհության սկզբնավորման գաղափարական հիմքերը, նախադրյալները, առանձնահատկությունները և ուղղությունները: Իրավացիորեն այն միտքն է ընդգծվում, որ «Խրուչչովյան հալոցքը» և Սառը պատերազմը նպաստավոր պայմաններ ստեղծեցին ԽՍՀՄ-ում 1960-ական թվականներից այլախոհական մտքի ձևավորման և տարածման համար, ինչը մեծ հարված էր կոմունիստական գաղափարախոսությանը: Միաժամանակ Խորհրդային Հայաստանում այլախոհության ակունքների և գաղափարաբանության ձևավորման հիմքերը գտնելու համար նա անդրադառնում է 1921թ. մարտի 16-ի Մոսկվայի ռուս-թուրքական պայմանագրից բխող հակահայկական որոշումներին և դրանց անդառնալի հետևանքներին:

Ուշագրավ են հեղինակի հստակ եզրահանգումներն առ այն, որ 1960-1980-ական թթ. Խորհրդային Հայաստանում քաղաքական այլախոհության գաղափարական հիմքում հիմնականում ընկած էին հողային պահանջատիրությունը, հայոց լեզվի պաշտպանությունը, 1915թ. Օսմանյան կայսրության կողմից իրականացված ցեղասպանության մասին բարձրաձայնումը, Հայաստանի անկախության վերականգնման համար պայքարը, մարդու իրավունքների պաշտպանությունը: Հենց այս հենքի վրա էլ ատենախոսը պատմական փաստերով բացահայտում է Խորհրդային Հայաստանում 1960-ական թթ. սկզբին քաղաքական այլախոհության առաջին դրսևորումները, առաջին կազմակերպությունների առաջացումը և գաղափարական զարգացման դինամիկան:

Թերևս առաջին անգամ հայ պատմագիտության մեջ համակողմանի լուսաբանվում է «Հայ երիտասարդական միություն», «Հայաստանի վերամիավորման

շարժում», «Հայ հայրենասերների միություն» ընդհատակյա կազմակերպությունների և «Ազգային միացյալ կուսակցություն» ընդհատակյա կուսակցության գործունեությունը: Ամբողջովին համակարծիք ենք ատենախոսի ԱՄԿ-ի ստեղծման և գործունեության առանձնահատկությունների վերաբերյալ գնահատականներին:

Առանձնակի հետաքրքրություն են ներկայացնում 1968-1978 թթ. ստեղծված «Հանուն հայրենիքի», «Հայաստանի վերամիավորման միությունը», «Հայաստանի Հելսինկյան խումբ», «Հայ երիտասարդների միություն» այլախոհական ընդհատակյա կազմակերպությունների գործունեությունը բացահայտող պատմական փաստերի վերլուծությունները: Հիմնահարցի ուսումնասիրությունն ավելի ամբողջական դարձնելու նպատակով ատենախոսը հատուկ քննության նյութ է դարձրել նաև 1960-1980-ական թթ. Խորհրդային Հայաստանում քաղաքական այլախոհության անհատական դրսևորումները: Կարմիր թելի պես այն միտքն է ընդգծվում, որ հենց այդ երևույթներն են ամբողջացրել այլախոհության անհատական դրսևորումներն Խորհրդային Հայաստանում ծավալած քաղաքական պայքարը: Հիշատակվում է այսպես կոչված «Մետրոյի գործը», որը, ըստ հեղինակի, ՊԱԿ-ն օգտագործել է հայ այլախոհների դեմ:

Ընդհանուր առմամբ Շահեն Հարությունյանն ներկայացրել է կուռ գիտական աշխատանք, կատարել է հիմնավորված եզրահանգումներ և հիմնականում լրացրել հիմնահարցի ուսումնասիրության բնագավառում առկա բացերը:

Այդուհանդերձ այս հաջողված աշխատանքի վերաբերյալ ցանկանում ենք արտահայտել որոշ դիտողություններ և նկատառումներ.

1. Ատենախոսության ժամանակագրական շրջանակները թեպետ ներառում են 1960-1980-ական թվականները, սակայն ատենախոսը Խորհրդային Հայաստանում այլախոհական շարժման նախադրյալները և առանձնահատկությունները դիտարկում է 1950-ական թվականներից /տես գլուխ առաջին, երկրորդ ենթագլուխ/: Այդ դեպքում ճիշտ չէր լինի նաև ատենախոսության վերնագրում նշել 1950-1980-ական թվականները:
2. Մեր կարծիքով ատենախոսն ավելին է ծանրացել 1921թ. Մոսկվայի և Կարսի պայմանագրերի մանրամասների վրա /տես էջ 30-35/, մանավանդ որ այդ հարցերը հանգամանորեն լուսաբանված են: Հարկավոր էր ընդամենը նշել այդ պայմանագրերի վերաբերյալ այլախոհների արդարացի

անհամաձայնությունը և դրանք վերանայելու պատրաստակամությունը, ինչպես նաև խիստ հակիրճ անդրադառնալ հասարակական-քաղաքական կյանքում առկա էական բացթողումներին և սխալներին:

3. Հարկավոր էր ատենախոսության մեջ ավելի հանգամանորեն ներկայացնել առանձին այլախոհ գործիչների կենսագրական տվյալները, մանավանդ որ նրանց որոշակի մասը լայն հանրությանն այդքան էլ հայտնի չեն: Ինչպես նաև անհրաժեշտ էր աշխատանքում զետեղել ինչպես առանձին գործիչների, այնպես էլ ընդհատակյա կազմակերպությունների հրապարակած որոշ թուղիկների ամբողջական օրինակներ:
4. Թեպետ ատենախոսն իրավացիորեն նշել է, որ այլախոհական շարժման առանձին ներկայացուցիչներ դարձել են անկախության շրջանի քաղաքական իրադարձությունների ակտիվ մասնակիցներ, սակայն սեղմագրում այլախոհների անուններ համարյա չեն հիշատակվում: Իսկ բուն ատենախոսության մեջ Անդրանիկ Մարգարյանի այլախոհական գործունեությանը խիստ հակիրճ /էջ 103/ անդրադառնալիս ոչ մի բառ չկա, որ նա հետագայում զբաղեցրել է ՀՀ վարչապետի պաշտոնը: Կամ ԱՄԿ-ի մեկ այլ անդամի, հետագայում ՀՀ ԱԺ նախկին պատգամավոր և ազգեն Կարախանյանի անունն ընդհանրապես բացակայում է:
5. Նկատելի են որոշ թերացումներ ատենախոսության գիտական ապարատում: Այսպես, ներածության բաժնում ամենևին կարիք չկա և բուն տեքստում, և տողատակում միևնույն աշխատությունների վերնագրերը նշել: Երբեմն առկա են նաև տեխնիկական և ուղղագրական վրիպումներ, ինչպես նաև որոշ փաստերի, տարեթվերի կրկնություններ:
6. Հաճախ ատենախոսության գլուխներն ու ենթագլուխները չունեն ամփոփումներ:
7. Օգտագործված սկզբնաղբյուրների և գրականության ցանկը, մասնավորապես մամուլի բաժինը չի համակարգվել. Տարբեր լեզուներով առկա գործերը խառնիճաղանջ են ներկայացվել:

Անտարակույս, նշված դիտողություններն ու ցանկությունները ավելի կատարյալ գիտական աշխատանք ունենալու նպատակ են հետապնդում, չեն նսեմացնում

